ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 107 - Ա
04 հուլիսի 2013 թ

ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1], 77[2], և 77[3] հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Լճաշեն համայնքի ղեկավարին՝
   1) Խիստ ուշադրություն դարձնել համայնքի բյուջեով նախատեսված հարկերի գանձման աշխատանքներին:
   2) Հաշվապահական հաշվառումը իրականացնել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
   3) Գյուղատնտեսական նշանակության դեռևս չվարձակալած հողամասերը վարձակալությամբ տրամադրելու համար Հայաստանի Հանրապետություն օրաթերթում տալ հայտարարություն:
   4) Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված համայնքային և պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի օգտագործումը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ-ի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման պահանջներին:
   5) Ապահովել«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջները:
   6) քաղաքաշինական գործառույթների բացթողումները շտկելու համար և հետևողական լինել քաղաքաշինական գործառույթների իրականացմանը:
   7) Առևտրի և ծառայությունների բնագավառում հսկողությունն իրականցնել "Առևտրի և ծառայությունների մասին" ՀՀ օրենքի 17[1] հոդվածի պահանջներին համապատասխան.

8) Համայնքի ղեկավարի կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքների վերաբերյալ մարզպետարան ներկայացնել հաշվետվություն "Առևտրի և ծառայությունների մասին" ՀՀ օրենքի 17 հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան:
9) Համայնքի ավագանու նիստերն հրավիրել ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով սահմանված կարգով և ժամկետներում:
10) ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2^1 կետի պահանջին համապատասխան գյուղապետի կողմից ընդունվող անհատական իրավական ակտերը երկօրյա ժամկետում տրամադրել համայնքի ավագանու անդամներին:
11) Սահմանված կարգով հաստատել և գործողության մեջ դնել գյուղապետարանի աշխատակազմի /նոր խմբագրությամբ/ կանոնադրությունը:
12) Հաստատել համայնքի ավագանու և գյուղապետի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը:
13) Վարել համայնքի ղեկավարի, ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի 2010-2012թթ. հաշվառման մատյանները:

2. Սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հուլիսի 31-ը:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ